և ի հաւատարիմ՝ քահանայից տեղւոյն ի հովուութիւն և զամենայն քահանայական արդիւնս բաժանել ի չորս մասն, յորոց երկուսն ընդունել ի հաշիւ պարտուց նորա առ Աթոռս ի գումարի 2651 ր. 67 կոպ. զմի մասն տալ ընտանեաց արգելեալ Սարգիս քահանային և զմի մասն թողուլ յօգուտ հովուող քահանային. Բ.) զգադարեցուցմանէ նորա ի պատւոյ աւագ քահանայութեանն ի կամիլաւկայէ և յայլոց պարգևաց վասն անհարազատ ծառայութեանց նորա շրջաբերական հրամանօք հրատարակել ընդ ամենայն թեմս Հայոց Ռուսաստանի ի թիւս որոց և Տպարանական Ժողովոյդ պատուիրել հրատարակել միջոցաւ Արարատ ամսագրոյ ի խրատ և ի զգուշութիւն միւսոց հոգևորականաց Հայոց. ի 13 Դեկտեմբերի 1885 ամի ի սուրբ Էջմիածին.

## ԾԱՆՈՒՑՈՒՄՆ.

Ըստ խնդրանաց Տպար. Ժողովոյ՝ Ս. Էջմիածնի, Սինօդն հրամայած է նշանաւոր զիջումն անել ձայնագրեալ Ժամագրոց և Ս. Պատարագի երգեցողութեան՝ ձայնագրագիտաց դիւրամատչելի լինելու համար։

Ձայնագրեալ Ժամագիրքն փոխանակ 25 ռուբլու՝ այսուհետև կվաճառուի 8 ռուբ. իսկ Երգեցողութիւն Ս. Պատարագի՝ 3. ռուբ. կանխիկ։

Իսկ միւս գրքերն 20% զիջումն՝ նոյնպէս կանխիկ։

Ցանկացողները թող դիմեն Տպար. Ժողովին, Թեմական Ատեաններին, Հոգ. Կառավարութեանց և Կենտրոնական Գրավաճառանոցին Տփխիսոյ և Անդրակովկասեան գրավաճառանոցին Աղէքսանդրապօլու։